

## ԱՔՍՈՐԻԱԾԻ ԶԱԻԱԿԸ

(Վ. Ի. ՍԼԱԽԵԱՆՍԿՈՒՅ)

Կ. Կ ը ա ս ի լ ն ի կ ե ա ն ց ի

—Հայրիկ, երբեմն, կարծես երազում,  
Որպէս միգապատ ամպերի միջով,  
Ինձ մի հրաշալի երկիր է փայլում  
Իւր կախարդական գեղեցկութիւնով:

Բայց մեր չորս կողմը պատել է ձիւնը,  
Կանաչ են մնացել միմիալն եղենիք...  
Այստեղ ամբողջ օրը փչում է բուքը  
Եւ կատաղաբար մռնչում մրրիկ:—

Այստեղ մեր հոգին ցրտանում է միշտ,  
Ել չ'ունինք մենք ոլժ համբերել սրան,  
Այստեղ տիրում է լռութիւն, մահ, վիշտ,  
Այստեղ գերեզմանը—է կեանքի նշան...

Իսկ այնտեղ, հայրիկ, և' լոլս է և' տաք,  
Ծաղկունք, անտառներ, կարկաչուն գետակ.  
Բայց միթէ տեսածն ցնորք է, հայրիկ,  
Ո՞ւր է այն հեռու երկերը գեղեցիկ:

—Լուռ կաց, դու լուռ կաց, իմ քաղցրիկ մանուկ,  
Բաղդի ցնորքը անւր մռացութեան—

Հազիւ կը ժպատալ նա քեզ մի վալրկեան,  
Յեաքից թողնելով յաւէրժ արտտսուք:

Անդառնալի է, հեռան այն աշխարհ,  
Այնտեղ ճանապարհ չը կալ մեզ համար.  
Աքսորանքիդ հետ հաշտուիր, սիրելի՛ս,  
Սրտիդ յուզմունքը մեղմացնւը, որդիս:

Ցնորք չէ միայն ինչ որ տեսնում ես,  
Այն հայրենիքդ է քո կարօտագին,  
Որն այնպէս չքնաղ ու գեղեցկապէս  
Ցածախ փալում է աչքիդ առաջին:

—Հայրիկ, տես, նա ինձ կանչում է իւր մօտ,  
Թող գնամ շուտով՝ նա ինձ է կարօտ.—  
Ինձ այստեղ ցուրտ է, իսկ այնտեղ գարուն,  
Այնտեղ արեւ տաք է և փալուն:

Այնտեղ ինձ մէկը կանչում է հեռուից,  
Ուրւականի պէս նա վեր է կենում.—  
Հայրիկ, այն ով է մայրենի երկրից,  
Որ ինձ դէպ' իրան ձեռքով է անում:

Տես, նա կանգնած է ծաղիկների մէջ,  
Դէմքը թախծալի, տիսուր ու գունատ,—  
Կարծես թէ վաղուց իմ մտքերի մէջ  
Նրան տեսել եմ... հայր իմ գթառատ:

Ահա նա կրկին կանչում է հեռուից,  
Կանչում է, կանչում—և դադար առնում...  
Հայրիկ, այն ով է մայրենի երկրից,  
Որ ինձ դէպ' իրան ձեռքով է անում:

—Քնիր, սիրելի՛ս, քնիր, իմ զաւակ,  
Այն քեզ յնորքն է գրգռում, յուզում.  
Զարթնել է նախկին օրւան լիշտագ,  
Այն է քեզ այնպէս կանչում, հրապուրում:

—Օրն արդէն մթնեց ցուրտ մառախուղում,  
Ո՞վ է հրապուրում ինձ այն հեռուից.  
Արգեօք մայրս չէ, որ ինձ կանչում է,  
Խորը քուն մտած սառ գերեզմանից:

—Այո՛, նա մայրս է կանչում... ներիր,  
Նա ինձ կանչում է ալնպէս ժպտալից...  
Գնամ նորա մօտ, այն հեռու երկիր  
Մինչ արշալուսը կը ծագէ նորից:

Երազումս հալրենիք կը թռչեմ,  
Այնտեղ կ'անցնեմ ամբողջ գիշերներ,  
Իսկ ցերեկը, հայր, քեզ հետ կը լինեմ...  
Զեզ չեմ մոռանալ, իմ հարազատնե՛ր...

Բագու. 1883 թ.

---